

19294

39

Մամոցի և կող սպանություն

Հետո

1905

891.99

0-51



2003  
\* \*



891.99  
0-51

THE HAIRENIX  
143½ Kingston  
BOSTON, - - - MASS.

Page 3

ՕՆԻԿԻ

ՄՈՍԻՔԻ Եհ զօրի ԱՐՁԱԿԱՆՔՆԵՐԸ

( 801-L-10 25, 1904 )

1005  
1001



(Արտատպւած «Հայրենիք» Շաբաթաթերթէն )

Տ պ ա ր ա ն «ՀԱՅՐԵՆԻՔ» |

27 Beach St. Boston, Mass., U. S. A.

1905

4585

C 444

444444

МАГИСТРАЛЯ ДЛЯ НАСЕЛЕНИЯ

(БОЛЬШИЕ МАССЫ)

ПРОДУКТИВНОСТЬ

ПРОДУКТИВНОСТЬ


ПРОДУКТИВНОСТЬ

(БОЛЬШИЕ ПРОДУКТИВНЫЕ СИСТЕМЫ)

ПРОДУКТИВНОСТЬ

А. Б. Ильинский. Издательство

1961



ՄԻՆԱՍ ԴՈԼՊԱԶԵԱՆ

( Գայլ — Վահան )





## ՄՈՍՈՒՆԻ ԵՒ ԶՈՒԻ ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐԸ

(Ցուլիս 25, 1904)

1904-ի գարունն էր.... Մշու դաշտը լցւում էր զօրքերով։ Կառավարական շրջաններում լսւում էր ինչ որ գաղտնի հրահանգների մասին Սասունի նկատմամբ։ բոլոր նշանները կասկածի տեղ չէին թողնում, որ աղատ Սասունի անմատչելի լեռների կատարներին կուտակում էին սև սև ամպեր։ Թիւրք կառավարութիւնը պատրաստում էր մի հարւածով խորտակել ու ոչնչացնել բոլոր այն ուժերը, որոնք վերջին տասը տարւան մ'ջ բողըոջել էին 1894-ին ջարդուփշուր եղած Սասունի աճիւններից։ Սասունցին նորից դէմ դէմի պիտի հանդիպէր իր վաղեմի թշնամուն։ Մահւան մենամարտի ժամն էր որ հնչում էր.... Քանի՛ քանի անդամ հնչել էր դա սաստնցու բազմադարեան կեանքում։ Կուից խոյս տալու հնար չկար, քանի որ կառավարութիւնը ինքն էր որ նախայարձակ էր լինում։ Պէտք էր ընդունել մարտի հրաւէրը, կամայ ակամայ։ Որքան էլ որ ստեղծըւել էին, ըստ երևոյթին, հայկական դատին նպաստառը հանգամանքներ՝ ա) մակեդոնական «բարենորոգումների» խնդիրը և բ) հայ դատի թշնամի հանդիսացող Ռուսաստանը զբաղւած էր ճապօնական պատերազմով — բայց սասունցին հասած չէր համարում կուի ժամը....

Սասունը նախայարձակ չպիտի լինէր, այդպէս էին թելադրում հանգամանքները, գոնէ 1904 տարւայ համար, բայց եթէ ուեէ փորձ արւէր տաճիկ կառավարութեան կող-

մից այդ ուղղութեամբ՝ Սասունը պիտի պաշտպանէր իր գոյութիւնը ամէն զոհողութեան գնով։

Այդ դէպքում որոշւած էր սահմաններից զինւած խմբեր ու ազմամթերքով օգնութեան հասցնել Սասուն, իսկ Օսմ.  
Հայաստանի զանազան կէտերում կազմակերպել ասպատակա-  
յին խմբեր, կռւին ընդհանուր կերպարանք տալու, թշնամու  
ուշադրութիւնը, հետևապէս ուժերը մի քանի տեղերի վը-  
րայ բաժանելու, որպէսզի թեթեացւէր կռւող Սասունի  
դրութիւնը։

Դեռ ևս ասլրիլ ամսին Սասունի ազատ լեռների վրայ  
ծածանւեց կռւի դրօշակը։ Սուլթանը իր կեղծ բանակցու-  
թիւններով խարել չկարողացաւ հայ ֆէղայուն, կռւիը յայ-  
տարարւեց աւելի վաղ, քան սպասելի էր — տաճիկ զօրա-  
պետները յարձակւեցին Սասունի վրայ այն վայրկենին իսկ,  
երբ կառավարութեան կողմից յարուցւած մի շարք միջ-  
նորդութիւններից յետոյ, տեղի էր ունենում բանակցութիւն  
նրա և սասունցիների միջև։

Կռւիը բռնկեց, և թիւրքերի առաջին յարձակումը ետ-  
մզւեց մեծ կռտորածներով։ Հրդեհը տարածւեց աւելի և  
աւելի հեռու, մարտական խմբերի գործնէութիւնը զանա-  
զան կէտերում անհրաժեշտ դարձաւ ինքնին։

Որոշւած ընդհանուր ծրագրի համաձայն, մի արշաւած  
խմբի կազմակերպութեան ձեռնարկեց Մ. . . ի կեդրօնական  
Կօմիտէն, գործնէութեան շրջան ընտրելով Բագրեսանդ գա-  
ւառը։

\* \*

Մուս տաճկական սահմանի վրայ ձգւած են իրար շա-  
րունակութիւն կազմող երեք պատմական գաւառներ — կոդ-  
հովիտ, Ծաղկոտն և Բագրեսանդ։ Այդ շրջանումն է Սր.  
Յովհաննու վանքը, որի մօտ յարմարաւոր գիրքեր ունե-  
ցող մի փոքրիկ շղթայով բաժանւած գտնուում են երկու  
հայկական գիւղեր՝ Խչքիլիսէ և Ղումլուպուճաղ։ Այդ  
երկու գիւղերումն էլ կան զօրանոցներ՝ առաջինը 50, ինկ-  
երկրորդը 30 զինւորներով։ Այս երկու զօրանոցները լինե-  
լու էին յարձակման առաջին կէտերը։ Կար մի այլ զօրանոց  
ևս, 50 զինւորներով, որ լինելու էր յարձակման երկրորդ  
կէտը։ Այդ էլ Մօսուն հայկական գիւղի զօրանոցն էր, ըն-  
կած մի Զօրագետակ անուն տափարակ գաշտի վրայ։

Արշաւախումբը երեք թևերի բաժանւած, միաժամանակ պիտի յարձակւէր այդ երեք զօրանոցների վրայ, ուղմաքը տեղալով և խորատակելով պահագնդերը, իսկ նրանց օգնութեան հասնող զօրքերի և քրողական աշխրէթների դէմ կռւելու համար՝ արշաւախմբերը զինւած էին մօսինի և բէրտանի հրացաններով :

Արշաւանքը կազմակերպող կեդր կօմիտէն մի քանի ամիս շարունակ մի կողմից ուսումնասիրում էր այդ շրջանի տեղագրութիւնը — զօրանոցներ, դիրքեր, ճանապարհներ և անցքեր — իսկ միւս կողմից պատրաստում էր փոխագրող խմբերն ու արշաւախումբը :

Հետեւեալ կերպով ձեռնարկւած էր գործի —

Նախ աշխատանքները բաժանւած էին երկու մասի, — բուն զինւորական մասը յանձնւած էր կօմիտէի կողմից ընտրւած մի յանձնախմբի, որի երկու մարզիչները — մի պահեստի սպայ և մի աւարտած զինւոր — պարապում էին վարժութեան, հրացանածգութեան և զինւորների ընտրութեան գործով : Իսկ ռազմամթերքի, հագուստի և այլ պիտոյքների տնտեսութիւնը յանձնւած էր մի այլ յանձնախմբի, կար մի մարմին ևս, որ զբաղւած էր այդ մեծ ձեռնարկի գործադրութեան ծրագրով . նա ունէր իր ձեռքի տակ յատուկ խուզարկու մի խումբ : Պէտք է չմոռնալ սակայն որ այստեղ ներկայացրած քարտէզը և ծրագրի վերջնական ձեւակերպումը կազմւեցաւ բոլոր յանձնախմբերի խառն ժողովում, ուր ներկայ էին նաև ուղեցոյցները իրենց օգնականներով :

Իսկ ընդհանուր գործի վրայ հսկում էր Մ . . Կեդրօնական կօմիտէն իր ամբողջ կազմով . և երբ հարկը պահանջում էր՝ անդամներից ուղարկուում էին անմիջական կարգագրութիւններ անելու համար տեղն ու տեղը :

Արշաւախմբին զէնքի կանչելը և կռւի դուրս հանելը որոշւած էր 1904 յունիսի 25-ին (հ. տ.) : Սակայն այդ օրոշումը, ինչպէս նաև ծրագրիրը ենթարկւեց փոփոխութեան, չնորհիւ մի ցաւալի իրողութեան, որը կարեոր ենք համարում արձանագրել այստեղ :

Յունիսի 22 թէ 23-ին մեր մթերքների կեդրօնաակեղում յայտնւեց 17 հոգուց բաղկացած, իրեն հնչակեան անւանող ձիաւոր մի խումբ, որ նրանց Մ . . մասնաճիւղի անդամ-

ների ասելով՝ Զ. . ի սահմանների վրայ երկու ամսից աւելի չըջելուց և երկիր անցնելու հնարաւորութիւն չունենալուց՝ յուսահատ անցել էր Մ. . Տեղին դաշնակցական գործակալը և հանգուցեալ Գայլ-Վահանը ( Մինաս Դօլպաշեան ) նկատելով որ զինւած և ձիւոր խմբի ներկայութիւնը կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելով՝ կարող է մեր ամբողջ ձեռնարկը մատնել, իսկ նրանց երկիր անցնելու մտադրութիւնը մեր կանխորոշ ծրագիրը փճացնել, — առաջարկում է այդ խմբին ամէն տեսակ յարմարութիւններ՝ դէնքերը պահելու և զինւորներին իրենց ձիերով պատսպարելու, միայն թէ նրանք զինաթափ լինէին և մի երկու օր սպասելով մեր արշաւախմբի հետ միասին անցնէին երկիր : Այդ նոյն առաջարկութիւնը եղաւ Մ. . կ. կօմիտէի կողմից ևս տեղին հնչ . մասնաճիւղին, դիտել տալով որ իրենց մի քանի մարդը ներս անցընելու պատրւակով մեր պատրաստ գործը չվսասէին, — սակայն այդ պարոնները, որոնք արհեստ են դարձրել մի գլուխ «միութիւն» աղաղակել, մերժեցին մեզ հետ կուի դաշտում միանալ : Հակառակ այդ բոլորին՝ մեր կօմիտէն չզլացաւ նրանց ուղեցոյց տալ, որ մինչև սահմանը ապահով հասցնէ խումբը : Իսկ սահմանագլխի շրջանում նորից դաշնակցականներն էին որ ապաստան տոին նրանց, իրքև յեղափոխականների, քանի որ հին-հնչակեանները չունին այն կողմերում ուեէ կազմակերպութիւն : Հին-հնչակեան մասնաճիւղը ցուցամոլութեան ջերմով բռնւած իր խումբը առաջ ձգեց, թէ վերջիվերջոյ ստիպւած եղաւ հետեւու մեր խորհուրդին՝ բաց թողնելով ձիերը, որ մեծ անյարմարութիւն էր՝ խմբի գնալիք ճանապարհների համար :

Զնայած դաշնակցականների այդ թանկագին աջակցութեանը, եսամոլ և նեղ կուսակցական ցաւով բռնւած մի հին հնչակեան ներկայացուցիչ յանդգնեցաւ նախատել մեր համեստ և խոհեմ Վահանին, և եթէ այդ յանդգնութիւնը անպատիժ թողեցաւ, թէ իրեն՝ Վահանի և թէ կօմիտէի կողմից, այդ միայն նրա համար էր որ այդ շրջանը և ամբողջ ձեռնարկը կարող էր վտանգւել, և յեղափոխականի արիւնը յեղափոխականի ձեռքով թափւած՝ եղբայրասպանութեան ոճիրի բնոյթը կարող էր ստանալ հասարակութեան աչքում :

Մեզ համար վերին աստիճան անհաճոյ այս միջադէպը մենք առաջ բերեցինք երկու նպատակով — ն ա խ՝ որպէսզի

Հասարակութիւնը իմանայ թէ ի՞նչպէս որոշ կարգի մարդիկ հասարակութեան աչքին փոշի փչելու համար «միութիւն» բառը շահագործում են անխղճօրէն, և երկրորդ՝ ցոյց տալու թէ կուսակցական եսամոլութիւնը ո՞րպիսի չարիքներ կարող է պատճառել յեղափ. գործին :

Վերջնական կազմով 14 հոգի հինգնչակեաններ յունիս 24-ին դուրս եկան այդ շրջանից դէպի Խըքիլիսէ : Ենթադրում է որ մեր ծրագիրը նրանց յայտնի էր : Յունիսի 31-ին այդ խումբը Պուլմուպուճաղ գիւղի մէջ նշարտում է զապտիէներից և ընդհարման բռնւելով՝ քաշում է գիրքերը և երկար կուռում : Նրանք կուել էին քաջարար անհամեմատ մեծ ուժերի դէմ և յաջողեցրել էին 20-ի չափ քիւրդեր և զապտիէներ գլորել : Իրենք էլ 8 հոգի զոհ տալով նահանջել էին :

Այս դէպքից անմիջապէս յետոյ, այդ շրջանի հայկական մի գծի վրայ կողք կողքի ընկած հինգ գիւղեր — Ղումլուպուճաղ՝ 40 տուն, Խըքիլիսէ՝ 30, Սայդօ 5, Ղարաբարագար՝ 15 և Զուզան՝ 40, ենթարկեցին թալանի, կողոպուտի և աւերման : Գիւղերը դատարկեցին, բաւականաչափ երիտասարդ մարդիկ սպանւեցին, օրիորդներ և կիներ բռնաբարւեցին — մի խօսքով տաճկական բռնակալութիւնը մի անգամ էլ երեսան բերեց իր գաղանային հակումները, մեր ծրագրւած արշաւանքին ընծայելով վրէժինդրութեան մի նոր ու թարմ դրդիչ :

Ամբողջ այդ շրջանը — շնորհիւ հին հնչակեան այդ խմբին — իր վրայ դարձրեց կառավարութեան ուշադրութիւնը . Բայազիտից, Դիատինից և Ղարաքիլիսայից զօրքեր բերւեցին այդ տեղ, զօրանոցներում և պահականոցներում եղած պահագնդերի թիւը կրկնապատկեց և եռապատկեց : Դրութիւնը այդ շրջանում ծանր կերպարանք ստացաւ : Այսպիսի աննպաստ պայմանների մէջ էր որ վիճակւած էր սկսել արշաւանքը . . . .

Գործի բարոյական պատասխանութիւնը թո՛ղ ծանրանայ այն մարդկանց գլխին, որոնք կուի դաշտում անգամ մոռացան մեր ընդհանուր դատի շահերը :

Այսպէս որոշեց մեր զինւորական խորհուրդը իր վերջին նստում, ծրագրի մէջ մտցնելով նաև մի արմատական փոփոխութիւն : Նախ՝ արշաւանքը մի քանի օրով յետաձգւեց

և ապա իւչքիլիսէի և զումլուպուճաղի արշաւանքը այլես  
անհնարին դարձած համարելով՝ ծրագրից դուրս ձգւեց :

Եւ այս անդամ արշաւանքը հետևեալ կերպով ծրագըր-  
ւեցաւ :

Մօսունի զօրանոցը իր ուժեղացած պահագնդերով մնաց  
արշաւանքի առաջին կէտը, իսկ յարձակման երկրորդ կէտը  
ընտրւեց Զօռի պահականոցը, ուր նմանապէս կրկնապատկը-  
ւած էր զօրքի թիւը : Ծրագրի մէջ առնւեցաւ նաև զիլան-  
ցի քրդերի մի մեծ օրա, որ իր 60-ի չափ վրանները գրել  
էր Զօռի պահականոցի մօսակայ ձորակում, երկու լանջերի  
վրայ :

\* \* \*

Ցունիս 6 (19), երեկոյեան ժամը 9-ին գիւղական մի  
ընդարձակ պարսպապատ կալատեղի վրայ մեղմիկ տեղացող  
անձրեսի տակ, արշաւախումբը սպասում էր շարժւելու հը-  
րամանին .

Հայ կամաւորների այդ խումբը, — որ մօսալուտ  
հրաժեշտի ախուր տպաւորութեան հետ ներշնչում էր  
նաև ոգեսրորութիւն եւ քաղցր իդձերի իրականացման վառ  
յոյսեր — բաղկացած էր ուղիղ 102 զոդուց, որոնցից 85  
զինւած էին հրացանով, մնացեալ 17ը ատրճանակներով և  
դաշոյններով: Այդ 17ից 2ը տանում էին գրօշակները, եր-  
կուսը իբրև օգնական բժիշկ կրում էին դեղատուփերը,  
իսկ 13-ը խմբին միացել էին որպէս բեռնակիրներ, վերցը-  
նելով փամփուշտի աւելորդ պաշար:

Աւելորդ չենք համարում առաջ բերել այստեղ մի քա-  
նի վիճակագրական տեղեկութիւններ խմբի կազմութեան  
մասին, քաղելով զինւորական մարմին կազմած ցուցակից:  
Դրանցով մի որոշ գաղափար կազմել կարելի է տալ ձեռ-  
նարկի լրջութեան վրայ: 102 զինւորներից 71ը ոռուսահպա-  
տակ հայեր էին և 31ը տաճկահպատակ: 102 զինւորներից  
20ը նախկին կուիւների մէջ եղած և առհասարակ գործի մէջ  
այս կամ այն կերպով մասնակցութիւն ունեցած էին, իսկ  
82-ը նոր մարդիկ: Տարիքի համեմատութեան գալով, վի-  
ճակագրութիւնը հետևեալ պատկերն է տալիս.

78 զինւոր 20ից մինչև 30 տարեկան

18 » 30 տարեկանից վեր

4 » 40 , , վեր

2 » 50 տարեկան

50 տարեկանները թող դարմանք չպատճառեն։ Որքան  
էլ այդ հասակը անսովոր լինի կռւի դաշտ գնացողի համար,  
պէտք չէ մոռանալ որ ազատութեան անունով մզւող կռի-  
ւը ընդունակ է ասպարէզ քաշել դարերով ճնշւած ժողովր-  
դի խական զաւակին, ինչ տարիք էլ որ նա ունենայ։ Տա-  
րիքների այդ բազմազան ու խայտարդէտ համեմատութիւ-  
նը յատուկ է ընդհանրապէս կամաւոր խմբերին։

Սակայն ամէնամեծ տոկոսը՝ 37%ը, այն է 38 հոգի  
20—25 տարեկան էին, որոնցից 12ը ճիշդ 20 տարեկան, իսկ  
18ը 21 տարեկան։ Այս տարիքը բոլորից շատ համապա-  
տասխանում է Գործի հրապոյրին։

102 հոգուց 18ը ամռւսնացած էին, իսկ 84ը ամռւրի։  
Ուստահպատակ դինուորներից մի որոշ թիւ՝ 17ը եղել են  
ուստահպատական ծառայութեան, մէկը պահեստի սպայ։  
այս հանդամանքը շատ էր թեթևացնում վարժութիւնների  
գործը, մանաւանդ դրանք՝ որպէս բոլորովին պատրաստ  
կռւողներ, տասնապեսի յարմար թեկնածուներ էին համար-  
ւում։ Թէկ պէտք չէ մոռանալ այն հանդամանքը, որ Փէ-  
դայական կռիւների մէջ դարբնւած և յեղափոխական ար-  
կածներից գուրս պրծած հայդուկին չի կարող փոխարինել  
և ոչ մի դինուոր, որքան էլ նա մնացած լինի դինուորական  
սովորական ծառայութեան մէջ — այս արդէն իրողութիւն  
է։

Կարդալ գրել իմացողների թիւը խմբի մէջ հաշւըւած է  
43, որ կազմում է 42%։ Վիճակագրութեան այսպիսի  
հետևանքը գուցէ շատերին տարօրինակ թւի, և յիրաւի,  
«միթէ» կամաւոր հայրենասէրների կէս մասից շատը չէր ի-  
մանում կարդալ գրել», հարց կը տան շատերը։ Պատաս-  
խանը շատ որոշ է յեղափոխութիւնը մեր ժողովրդի մէջ  
միանդամայն ընդհանուր հանդամանք ստանալով, նա աս-  
պարէզ է քաշել բոլոր դասակարգերին հաւասարապէս, ո-  
րից ակներև է որ կեանքի ներկայ պայմանների յեղաշրջու-  
մը մեր ժողովրդի համար դառել է անդիմադրելի պահանջ։  
Այս եղբակացութեան բերում է մեզ նոյնպէս պարապմունք-  
ների վիճակագրական տախտակը, որ ահա։

102 դինուորներից 44ը պատկանում են երկրագործ դա-  
սակարգին, 16ը պարապում էին զանազան արհեստներով,  
10ը խոհարար, ծառայ և նման աշխատաւորներ են։ իսկ 32ը  
անյայտ պարապմունքների մէր մարդիկ։ Այս թիւն պատ-

կանում են մեծ մասով գաղթականները, անից տեղից հալածական, բախտից հալածւած այդ թշւառները, որոնք իրենցից ներկայացնում են մի մարմացած բողոք անսիրտ աշխարհի դէմ-

\* \* \*

Մի գաղափար տալու համար թէ որքան փող է նստել Մօսուն-Զօռի արշաւախումբը, առաջ կը բերեմ մի քանի թւանշաններ, որոնք կլոր հաշւով եղած են, որովհետև ծախսի գլխաւոր առարկան, օրինակ հրացանը, այլեայլ ժամանակ, այլեայլ գներով են ձեռք բերում, և Մ . . . կեդր. Կօմիտէն ինքը չէ գնած դրանք, այլ ստացել է զէնք գնող դաշնական մարմիններից :

102 զինւորներից բաղկացած արշաւախումբը ունեցել է  
85 հրացան —

|                          |                |      |    |         |          |
|--------------------------|----------------|------|----|---------|----------|
| 60                       | բերդան հրացան, | հատը | 30 | ոռուբլի | 1,800.00 |
| 25                       | մօսին          | »    | 40 | »       | 1,000.00 |
| 15,000                   | փամփուշտ բ.    | »    | 5  | կոպէկ   | 750.00   |
| 8750                     | »              | մ.   | 10 | »       | 875.00   |
| Ուրիշ ռազմամթերք         |                |      |    |         | 658.56   |
| Զէնքի փոխադրութիւն       |                |      |    |         | 1043.85  |
| Փամփշտանոցներ            |                |      |    |         | 177.50   |
| Զինւորների տեղափոխութիւն |                |      |    |         | 703.62   |
| » ապրուստը               |                |      |    |         | 260.84   |
| Արշաւախումբի հագուստ     |                |      |    |         | 1005.08  |
| » ուստեստ                |                |      |    |         | 302.82   |
| » մօտ պատրաստ դրամ       |                |      |    |         | 456.00   |

Համագումար ոռուբլի 9,038.27

Արշաւախումբը հետն ունեցել է նաև 80 հատ ոռումբ, երեք տարբեր մեծութեամբ :

Հրացանների և փամփուշտների ծախսներից դուրս, միւս ծախսքերը եղել են նաև ներկաթ — թողմամախ խմբի 16 հոգու համար, որոնք Արճէշի մօտ կռւի բռնեցան, 1904 մայիս 20-ին :

\* \* \*

Արշաւախումբը բաժանւած էր երկուսի .

1.) «Մասիս» խումբ, հինգ տասնեակ զինւորներով և մի տասնեակ բեռնակիրներով, որի ղեկավարութիւնը յանձնւած

էր խմբապետ Մ. ին և նրա երկու օգնականներին — կիւիկեցի Սիմոնին և Լի Հունդ Զանգին :

2.) «Արտաւազդ» խումբ, 3 ու կէս տասնեակ զինւորներով և 7 բեռնակիրներով, որին ղեկավարելու կոչւած էր խմբապետ Գայլ Վահանը և նրա օգնական Բարկէնը :

Խւրաքանչիւր խումբ ունէր մի դրօշակիր, իր յատուկ դրօշակով, մի բժիշկ իր շարժական դեղատնով և երկու երեք ուղեցոյց :

Խւրաքանչիւր խումբ ունէր իր զինւորական խորհուրդը, բաղկացած փորձառու և կրթւած զինւորներից : Զինւորական այդ երկու խորհուրդները միասին կազմում էին Ընդհանուր Զինւորական Խորհուրդը՝ երկու խմբերի միացեալ գործնէութեան ընթացքում :

Խումբը զինւած էր այս կերպ։ Խւրաքանչիւր զինւոր ունէր վերցրած մի հրացան, մօսինի կամ բերդանի, 250—350 փամփուշ՝ եթէ վերցրածը բերդան է, 350—450 հատ փամփուշ՝ եթէ մօսին է։ Մի հատ ուումբ, տարբեր մեծութեամբ, մի ատրճանակ տարբեր սիստէմի, մի դաշոյն։ Ատրճանակ և դաշոյն տրւած էր զինւորների մի մասին միայն, ինչպէս վերը ասացինք։ 3—4 փամփուշտնոցներ, 1 պայուսակ, 1 իւղի աման, 1 հատ սուլիչ, նաև հրացանի անհրաժեշտ մի քանի մասեր («պրօտիրկա», «ատլիօրկա» ևն.)։

Խումբը առանձնապէս աշքի էր ընկնում իր գորշ համազգեստով, գոյնով նման շրջապատի առարկաների գոյնին, աննկատելի դարձնելու համար զինւորներին թշնամու տեսքից։ Համազգեստը տալիս էր խմբին մի կազմակերպւած գնդի տեսք, մանաւանդ շնորհիւ լեռնականների յատուկ կօզակեան գլխարկներին։ Համազգեստը այսպէս էր կազմւած։ Խւրաքանչիւր զինւորին տրւած էր 1 սիրուն գլխարկ, 1 պիտմակ, 1 վարդիք, 1 բաճկոն՝ մոխրագոյն կտորից, 1 բլուզ, 1 գօտի, 1 ծուղա երկաթապինդ կօշիկներ, 2 զոյդ գուլպայ, 1 շապիկ, 1 անդրավարտիք, 3 թաշկինսակ, հրացանը մաքրելու շորեր, 1 ջրի աման և ամէն տասնեակին 2-ական անթափանց վերարկու։


Խւրաքանչիւր խումբ ունէր իր քարտուղարը՝ դէպէերը արձանագրելու համար, նաև իր դիտակը և իր փողը։

Խմբի պաշարը պատրաստւած էր շատ թեթև, միենոյն ժամանակ սննդարար կերպով։ Խւրաքանչիւր զինւորի 7—8 օրւայ պաշարի համար տրւած էր 6—8 հատ լաւաշ հաց,

«ԱՐՄԵՆԻԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ»



«ՄԱՍԻՆ» ԽՐԵՎԵԼ



որ կ'անի մօտ 6—8 ֆունտ, գաթայ 1 ֆունտի չափ, հալւա  
5—6 ֆունտի չափ, 2—3 ֆունտ խաշած միս, նաև ջրի ա-  
ման լի ջրով և ջամբաթ բերանները առհասարակ թաց պա-  
հելու համար։ Ահա այսպէս պատրաստութեամբ Փէդայ-  
ական երկու խմբերը սպասում էին շարժւելու հրամանին։

Զինւորական խորհուրդը զինւորներից փոքր ինչ հեռու  
իր բացօդեայ նստում ընդունեց Մ. Կեդրօնական կօմի-  
տէի վերջին հրահանգները և ցրեց։ Անմիջապէս նշան  
տրւեց և խումբը պատրաստ էր շարժւելու։

Արշաւախմբի մեկնումը Ք. գիւղից սրտաշարժ էր և  
ազդու։

Ամէնասառնարիւն մարդը չէր կարող առանց զգածւե-  
լու նայիլ դարերով ձնշւած ազգի բախտը վճռող Փէդայա-  
կան այդ խմբի վրայ, և առանց արցունքի ականատես լինել  
նրան դէպի անհաւասար կոխւ բարիերթ մաղթող ժողո-  
վրդի՝ մեծի ու փոքրի, կանանց ու ծերունիների փայփայ-  
անքներին։ Զեր առաջ կանգնած էր հայ կամաւորների  
խումբը՝ կազմ ու պատրաստ — նրա վրայ տարւած բո-  
լոր հոգսը, ամիսների ընթացքում անխոնջ ջանքերը պսակ-  
ւել էին յաջողութեամբ. ոչ կառավարական սարսափը, ոչ  
լրտեսների և դաւաճանների արարքը խափանել չկարողա-  
ցան գործը։ Եւ այդ բոլորը շնորհիւ այն պարագային, որ  
ազատագրական շարժումը այլևս անհատների գործը չէր,  
որ նա ընդունել էր ժողովրդական բնաւորութիւն, որ այդ  
գաղափարը մարմնացում էր ստացել բոլոր դասակարգերի  
մէջ։ Յեղափոխականը ո՛չ միայն ընդունելութիւն, այլև  
հիւրասիրութիւն և պատիւ էր գտնում իւրաքանչիւր հայի  
մօտ. յեղափոխական զէնքը իր տան մէջ ընդունելու և պա-  
հելու և պատրաստ էր յետին գիւղացին անդամ։ Մենք յա-  
ճախ պատահել ենք գիւղացիների, որոնք վշտոտ սրտով տր-  
տունջ էին յայտնում որ իրենց տունը չի' արժանացել յե-  
ղափոխականի այցելութեան։ Ահա՝ մեր ժողովրդի գիտա-  
կից վերաբերումն էր — այն ժողովրդի որ մի քանի տարի  
առաջ մի մեռած դիակ էր ներկայացնորմ — որ ծնեցնում  
էր մեր մէջ վաղուց փայփայած յոյսերի իրականացման ե-  
րաշխաւորութիւնը . . . .

Զէ', այդ ժողովուրդը կորչելու ժողովուրդ չէր. նա  
խոստանում էր ապագայ — այդ տպաւորութիւնը թողեց մեզ

վրայ արշաւախմբի մեկնումը՝ գիւղական հասարակութեան բուռն ոգեսրութեան և քամուղ արտասուքների ուղեկցութեան վայրկենին։ Տեսարանը յուղիչ էր…… յուղիչ էր մանաւ անդ, երբ խօսեցին խմբապետները։ ականջիս մէջ խըժը ում է դեռ նրանց վերջին խօսքերը —

« Տղերք, երդւեցէք, երդւեցէք որ գնում էք մեր բըռնաբարւած քոյլերի պատիւը պաշտպանելու։ Երդւեցէք որ գնում էք մեր թշւառ մայրերի վիշտը սփոփելու, երդւեցէք, որ գնում էք արտասուքով և արիւնով ողողւած հայրենիքի փրկութեան շնչնքին մի քար էլ աւելացնելու։ Երդւեցէք, որ գնում էք Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակը բարձր պահելու……»

Գիշերային լոռութեան մէջ, գիւղական ծուռումուռ փողոցներում արձագանդ գտան նրանք. հարիւրաւոր բերան-ներից հնչեց «Երդւում ենք», և համբոյրների տարափի տակ խումբը առաջ շարժւեցաւ։

\* \* \*

Որպիսի՛ վեհ և միևնոյն ժամանակ սրտաշա՞րժ տեսարան։ Առաջից գնում էր ձիու վրայ իր պարթև հասակով բազմած, յաղթական քայլերով, գիւղական համակրելի քահանան։ Նրա յետելից քայլում էր դարաւոր կաղնին յիշեցնող հուժկու, յաղթանդամ լինթը։ Գալիս էին ապա խմբապետ Մ. ը, դրօշակրի հետ միհասին, որ ոսկեթել դրօշակ ունէր բռնած, ու օդնականները և ապա «Մասիս» խմբի երկար շղթան, զոյգ զոյգ կարդով։

«Մասիս»ից յետոյ, մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, դալիս էր խմբապետ Գայլ Վահանը, միհայնակ, ապա նրա օքնականը՝ կապիտան Բարկէնը, դրօշակրի հետ միհասին, որ նոյնակս ոսկեթել մի դրօշակ ունէր ձեռին։ Եւ ապա նրանց յետելից գալիս էր «Արտաւազդ» խմբի երկար շղթան, դարձեալ զոյգերի կարդով։

Իսկ այդ բոլորին յետելում էր գիւղական ժողովրդի խուռն բազմութիւնը՝ բաղկացած երիտասարդներից, մանուկներից ու ծերերից, որոնք օրւայ դաշտային ծանր աշխատանքի յոդնածութիւնը մոռացած՝ ժամերով սպասում էին ողերթ մաղթելու։



Երբ արշաւախումբը հասաւ գիւղի սահմանին, տեղի  
ունեցաւ մի սրտաշարժ տեսարան։ Այդ տեղ էր հաւաքւել  
գիւղի կանանց և աղջիկների մի մեծ բազմութիւն, վերջին  
անգամ յաջողութիւն մազթելու իրենց կարիճներին։ Հա-  
զիւ ֆէդայական շղթայի ծայրը հասել էր նրանց մօտ, կա-  
նացի օրհներգների և բարեմաղթութիւնների հետ միաժա-  
մանակ՝ բարձրացան լացի, հեկեկանքների սրտաճմլիկ ա-  
ղաղակներ — լաց էին լինում ծերունիները, լաց էին լինում  
երիտասարդները, լաց էին լինում և մանուկները . . . .

Մարտական ոգեսրութեան, վաղո՞ւց փայփայւող յոյսերի,  
ողջերթի դառնութեան — մի խօսքով բոլոր այդ զգացու մ-  
ների թարգմանն էր հանդիսանում դիձկող սիրալ ժողովր-  
դի, — դարերով ճնշւած, տանջւած, հալածւած ժողովրդի  
սրտի հեկեկանքն էր խօսում . . . . լացը չարունակւում էր  
գեռ երկա՛ր . . . .

Այդ բոպէին մէկը կար միայն, որ չէր արտասւում, չէր  
հեկեկում, այլ ուրախ սրտով, հաստատուն քայլերով, լի  
գիտակցութեամբ առաջ էր գնում այնտեղ, ուր Մայր Հայ-  
րենիքի թշւառութիւնն էր նրան կանչում, ուր մի ամբողջ  
ժողովրդի տառապանքը ծառս էր ելնում անսիրտ աշխար-  
հի անտարբերութեան դէմ։

Այդ հայ ֆէդային էր :

Նա գնաց և իրեն հետ տարաւ մեծամեծ յօյսեր :

\* \* \*

Յուլիս 11-ի (հ. տ.) լուսաբացին՝ ալեոր Մասիսի ստո-  
րոտը հանգչող Զնդլներ բարձունքների Ռէսի.Գոմեր բլուրի  
վրայ ծածանւեցին երկու դաշնակցական դրօշներ։ Այդ  
վերջին կայանն էր, ուր պէտք էր տեղի ունենար զինւորա-  
կան խորհուրդի վերջին նիստը, և որտեղից պիտի կատար-  
ւէր առաջին յարձակումը թշնամու վրայ։ Այդ բլուրից  
դէպի հարաւ, մի սիրուն տափարակի վրայ, երկում էր Մօ-  
ստունը՝ հայկական մի մեծ գիւղ, որի մի ծալրում հեռադի-  
տակի միջից նկատում էր զօրանոցը։ Դէպի արևելք բլու-  
րի ստորոտում, մի ձորակի մէջ ընկած էր Զօռի պահակա-  
նոցը։

Ո՛չ արեգակի կիզիչ ճառագույթները և ո՛չ էլ երկար ճա-  
նապարհի յոդնածութիւնը ու ուանջող ծարաւը չէին թու-

լացնում հայ զինւորի ողեռութեան թափը : Նոյն բլրի լան-  
ջում, մի խոտաւէտ մարգագետնի վրայ կանդ էր առած՝  
դրօշակի տակ՝ փամփշտապատ տասնեակների շարքը, իսկ  
մի փոքր հեռու՝ երկրորդ դրօշակի տակ՝ կատարւում էր  
զինւորական խորհուրդ, երկու խմբապետների, երեք օգ-  
նականների և բազմաթիւ տասնապետների մասնակցու-  
թեամբ : Դիտակները երբեմն դարձնում էին այս ու այն  
կողմ, չափում էին հեռաւորութիւնները, ճշգում էին յար-  
մարաւոր դիրքերը ու խորհրդակցում, մինչև որ պատեց  
մութը, ու տիրեց մրափը, փոթորկալից առաւօտ կանխող :  
Գիշերւայ ժամը Զին նշան տրւեց, ոտի կանդնեց արշաւա-  
խումբը ու խաղաց առաջ :

Բլրի ստորոտում, զինւորական խորհրդի որոշման համա-  
ձայն, արշաւախումբը բաժանեց երկու մասի — մեծ խում-  
բը Գայլ—Վահանի հրամանատարութեան տակ բռնեց Մօ-  
սուն տանող ճանապարհը, իսկ փոքր խումբը դրւեց Զօռի  
ճանապարհը : Գիշերային լրութիւնը մի վայրկեան թեթև  
աղմկեց հրաժեշտի շշուկով, և հետզհետէ հեռաւորութեան  
մէջ անլսելի սկսան դառնալ դէնքերի խուլ շաչիւնը :

\* \* \*

Մօսունի մի ծայրում, Քօրուն տանող ճանապարհի վրայ  
ընկած էր անշուք զօրանոցը, իր ցածլիկ պարսպապատ բա-  
կով, որտեղ բացօդեայ գիշերում էին՝ իւշքիլիսէի դէպե-  
քի պատճառով նոր աւելացրած զօրքերը, որովհետև զօրա-  
նոցի սենեակները անբաւական էին նորեկները պատսպարե-  
լու : Զօրանոցում գտնւող զօրքի թիւը ճիշդ հաշւով 160  
էր, որոնցից 50-ը նորակոչներ : Զօրանոցից մի փոքր հեռու  
գիշական ջրաղացի մօտ ցցւած էին երկու սպիտակ վրան-  
ներ :

Երկու ժամւայ ճանապարհ կտրելով, 1904 յուլիս 12-ին  
(25), առաւօտեան ժամը 4-ին «Արտաւազդ» խումբը երեք  
կողմերից պաշարեց զօրանոցը և յիշւած երկու վրանները :  
Երկու ֆէդայի կտրեցին Բայազէտի հեռագրական թելերը,  
իսկ չորս ումբաձիգներ խմբից բաժնւելով՝ աննկատելի կեր-  
պով իրենց ձգեցին զօրանոցի կտուրը : Այդ ժամանակ մի-  
այն զօրանոցի շունը հաջեց, և հրացանի փողին կռթնած  
պահապան զինւորը, սթափւելով, ճայն տւեց «0 քի՞մ»,  
(Ո՞վէ) : Պահապանի ճայնը խեղդւեց կոկորդի մէջ, ուզե-

ցոյց Խենթի գնդակը ցած էր գլորել պահապանին։ Գրեթէ նոյն վայրկենին զօրքը ոտքի կանդնեց և զօրանոցի մէջ եղողները դուրս թափւեցին, շատերը շապկանց։ Այդ վայրկենին երկու ոռոմբ միաժամանակ ընկան ու պայթեցին խոնած զօրքի մէջ։ աջ ու ձախ թափւում էին գալարող դիակներ.... Կենդանի մնացող թիւրք զինորները սարսափահար զօրանոց մտան և զինւելով, ներսի հրամանների ձնշումի տակ, փորձեցին դուրս գալ, բայց երրորդ, չորրորդ ոռոմբերը աւերում գործեցին չէնքի մէջ, ջարդ ու փշուր անելով դուռը, գետին թափելով սարսափահար զինորների։ Կուի կենտրոնատեղին էր դա։ Իսկ այդ տեղից մի փոքր հեռու, պարիսպների վրայից տեղում էր գընդակների տարափը՝ աջ ու ձախ սփուելով թիւրք դիակներ։

Զօրանոցի բակի մէջ իրարանցում էր տիրում։ այդ միջոցին յանկարծ լսւեց խմբապետի ձայնը՝ «Թշնամին, տըղե՞րք», և նա ինքն էլ, տեղացող գնդակների տակ մօտեցաւ հանդիպակաց պարսպին։ Վրաններից դուրս թըռած 16 զինորներ, որոնք պարսպի յետեկից կրակ էին տեղում դէպի բակը, մի ակնթարթում յետեկից պաշարւեցին և տեղն ու տեղը կոտորւեցան։

Հէնց նոյն վայրկենին, մի փոքր հեռու, մթերանոցի մօտ խմբւած զինորների մէջ պայթեց Համօի ձգած ոռոմբը — թիւրքերից մէկը միայն մնաց կենդանի։ Երկու ժամ գրեթէ շարունակ անընդհատ տեսող մօսինի հրացանների և ոռոմբերի կրակից յետոյ, տիրեց մի գերեզմանային լռութիւն։ զօրանոցում այլևս կենդանի մարդ չէր մնացել։ Թիւրքերից շատ քիչ եր միայն յաջողել էին զօրանոցի յետեկի մի փոքրիկ դռնակից դուրս պրծնել և գիւղի մէջ պատսպարան դտնել։ Այդ էլ չուտ յայտնի եղաւ, երբ հրացանների և ոռոմբերի ձայները գաղարելուց հազիւսիրտ առած, հայաբնակ գիւղի տներից դուրս գալ սկսեցին տղամարդիկ։ Նրանք յայտնեցին որ իրենց տների մէջ կան նաև գիշերով զինորներ, որոնք ըստ սովորութեան անարգել են հայի ընտանեկան սրբութիւնը....

Այս բանը հաստատում է նաև Պօլսի պատրիարքարանում ստացւած յուշի 7՝ համար 880, հետեւեալ պաշտօնական գրութիւնով։ — «Ամսոյս Յին Մօսուն գիւղը յեղափոխականներու կողմէն «պիտի կոխւի» ըսելով, սուտ լուր մը

կը տարածէին քրդերը : Մօսունի զօրապետ հարկ կը համարի Համիտիէ զօրքերու Սանճաքտար իւսութ տղան և անոր մարդիկ 300 ի չափ քրդեր օգնութեան կանչելով, իւրաքանչիւր հայու տուն 2—3 ը օթեանեցնել, որոնք գիշերւան մէջ, միայն բայազէտցի Նաւօեան Մկրտիչի տունէն ու խանութէն գողցած տարած են 40—50 ոսկիի ապրանք :

Այդ տեղեկութիւնը աւելի ևս կատաղեցրեց Փէդայուն, սկսւեց գիւղի մէջ, փողոցներում և տուներում խուզարկութիւն, բաւականին զինւորներ հէնց այդ միջոցին սպանւեցան : Գիւղը բոլորովին մաքրւեց տաճիկ պիղծ զինւորներից : Այդ յիշատակելի կուռմ, Մօսունի մէջ, հայ Փէդայու գնդակներին զոհ գնացին 120—130 թիւրք զինւորներ . իսկ հայ զինւորներից ընկաւ մէկը և վիրաւորւեցին երկուսը :

\* \* \*

Բնդ հանուր ոգեորութեան հետ բացւեց ծանր դէպքերի առաւօտը : Տեղական հայ գիւղացու աչքերի առջև պատկերացաւ տաճիկ զօրքերի և քրդական բարբարոսութիւնների հեռանկարը — հաղիւ մի չաբաթ էր անցել հարեան հինդ գիւղերի աւերմունքից և կոտորածից, քօչելուց զատ ուրիշ ելք չկար : Մի ժամում դատարկւեց Մօսուն գիւղը . 400-ի չափ ամէն դասակարգի գիւղացի, համբուրելով հայ զինւորների հրացանի փողը՝ բոնեցին Ռուսաստանի՝ այդ «քրիստոնեայ» պետութեան ճանապարհը : Դրանց միացաւ նաև հարեան Քօրուն հայ գիւղի բնակիչները, որոնք լսելով Մօսունի պահնորդ գունդի կոտորածը, սարսափահար գլուխ էին փափցնում : Մի երկու տասնեակներ չըջապատեցին գաղթողներին և շարժւեցին դէպի լեռնային գիրքերը : Իսկ միւս տասնեակները քաշւեցին գիւղի գերեզմանատունը, որ լիքն է խաչքարերով, կանգնեցնելու համար զօրքերի և քրդերի մօտալուտ յարձակումները — նրանք չըջականներից՝ գիշերային կուի ձայնից հաւարի գալով, սւզում էին գաղթողներին ձեռք ձգել : Քրդերի խուժումը շարունակում էր անընդհատ . երկու տասնեակներ հերթով գիրք բռնելով թշնամու գնդակների տարափի տակ, ժամանակ էին վաստկում՝ գաղթող ժողովրդին լեռ հասցնելու : Այդ կուի մէջ ընկաւ բնիկ երեանցի 30 տարեկան Արտաշ Տէր Մատթէոսանը — համեստ, բայց յամառ կուող մի զինւոր :

\* \* \*

Զնդլներ կոչւած բարձունքների ստորոտում, հիւսիս առևելքից դէպի հարաւ ընկած է մի ձորակ, որ ձգւելով և սղմւելով գնում է Ռէսի-Գոմեր սարի բլուրի մօտ վերջանում է մի կիրճով։ Դրա բաւականին նեղ անցքից մի ճանապարհ տանում է ձեզ դէպի Մօուն, ապա Բայազէտ։ Այդ ձորակի մէջ ընկած է օսմանեան Զօռի պահականոցը, որտեղ գտնուում էին 35—40ի չափ զօրքեր։ Բացի դա, ձորակի երեք ձիւղերի միացած տեղում, սարալանջերին փուած է քրդական մի աշխիքթի՝ Զիլանցիների օրան, 60ի չափ վրաններով։ Այդ պահականոցի վրայ յարձակումը յանձնւած էր «Մասիս» արշաւախմբին։ Խմբապետի ուշադրութիւնից չէր վրիպել կիրճի հսկողութեան կարևորութիւնը, մանաւանդ այն պարագայի համար, երբ զօրքերին միանային նաև այդ վրաններում ապրող քրդերը, որոնց կռւողների թիւը 100ից պակաս չէր լինի։ Յուլիս 12ի (25) դեռ ևս աղջամուղջին, արշաւախմբի տասնեակները կարգով դիրքեր գրաւեցին կիրճի մուտքից սկսած մինչև վրանների թիւնքի ժեռուածները և սպասում էին խմբապետի նշանին, որ իր հերթում, սպասում էր Մօունի վրայ մօտալուտ յարձակման ընթացքին։ «Մասիս» խմբից մի տասնեակ հսկում էր բարձունքների վրայ, թշնամուն թոյլ չտալու որ դրաւէր այդ դիրքերը։ Մօունի յարձակումը երկար սպասել չտըւեց։ Առաջին խակ ուումբերը արձագանդ գտան ամէն ուրեք։ Զօռի պահականոցի պտհապանը սարսափեց այդ անսովոր պայթիւնի ճայնից և բոպէապէս հրացանը պարզեց օդի մէջ ու արձակեց։ Անդիտակիցօքէն արձակեցին նոյնպէս տասնեակներից մի երկուսը։ Այդ ճայների վրայ զօրքերը դուրս թռան, զէնքը ձեռքները, այդ տեղ վաղեցին նոյնպէս քրդերը, որոնք միանալով զօրքերին, վազ տւեցին դէպի կիրճի մուտքը։ Յարմար րոպէն պատրաստ էր։ Փողը նշան տւեց, և միաժամանակ ամէն կողմերից տեղաց գնդակների կարկուալը։ Դիակները ճօճացին իրար վրայ, սարսափը տիրեց ձորակին, ուր զօրքերն ու քրդերը դլուխը կորցրած՝ այս ու այն քարը, այս ու այն թուփը վազվզելով՝ դլուռուում էին հարիւրաւոր գնդակների տակ։ Հրացանների կրակը տեսեց մինչև առաւօտ։ Լոյսը բացւեց, յոխորտացող թիւրք զինուորների տեղ, նրանց դիակներն էին փուած այս ու այն կողմ։

Այդ կոտորածից ազատւեցին քչերը միայն, որոնք Ռէսի-Գոմեր սարի վրայ դիրք բռնած՝ հատ ու կտոր պայթիւն-ներով իրենց ներկայութիւնն էին ցոյց տալիս։ Այդ տեղ կա-յին քիւրդ կանայք և երեխաներ, որոնք վրաններից գուրս գալով՝ քաշւել էին հակառակ կողմի բլուրները — հրամայւած էր խնայել նրանց։ Այս կուռմ սպանւեց նաև իր քաջութեամբ անուն հանած թիւրք է լ բաշին, իր որդու հետ միասին։ Երկու ժամ տեղով կուրից յետոյ, ձորակը լը-ռեց և նրա մուտքն ու դիրքերը գրաւող մեր տասնեակնե-րը քաշւեցին։ Դրանից յետոյ սկսւեց ծանր օրւայ յամառ ու երկարատև կուրը։

\* \* \*



Գաղթող ժողովրդին ուղեկցող մի երկու տասնեակ, ինչպէս և Զօռի վրայ յարձակող տասնեակները սկսեցին բարձրանալ և փոքր առ փոքր դիրքեր դրաւել, միանգա-մայն անընդհատ կրակ տեղալով թշնամու վրայ, և գրեթէ ամէն անդամ թափթփելով նրանցից մի քանիսին։ Այդ օր-ւայ կուրները նշանաւոր եղան թշնամու ունեցած կորուս-տի մեծութեամբ և մեր մի երկու ընկերների ցոյց տւած անսանելի քաջութեամբ և հերոսական մահով։

Քրդական մի շէյխ, գլուխ անցած կատաղի ահազին մի խուժանի, փրփուրը բերանին, սալաւաթ կանչելով և խրախուսանքներ կարդալով, վրայ է տալիս Վահանի, Բար-կէնի, Համօնի և Գարեգինի դիրքերի վրայ, բայց յետ է մղ-ւում կորուստ տալով։ Վահանի և Բարկէնի հարւածները թշնամու շարքերից գլուրում էին երկ-երկու դիակներ։ Բարկէնի՝ կուելու ժամանակ պահպանած սառնարիւնու-թեան, ճիշդ նպատակին խփելու ընդունակութեան և մին-չե վերջին շունչը յամաօրէն կուելու տոկունութեան իրք ապացոյց՝ ականատեսը պատմում է հետեւալը.

Բարկէնի գտնւած դիրքին իշխելու համար 12 հեծեալ քր-դեր փորձեցին մի պտոյտ գործել և գրաւել մի ուրիշ բար-ձըր դիրք, բայց քաջ Բարկէնը մէկիկ մէկիկ, ինչպէս ասում են, ցած բերեց ձիերից այդ գաղան քրդերին, նրանցից ոչ մէկը կենդանի չմնաց։ Թշնամու ուշագրութիւնը դարձաւ այդ կէտի վրայ։ դիրքի անյարմարութիւնը և պաշտպա-նողների փոքրաթիւ լինելը, կուողների յոդնածութիւնը



ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ ԽԱՉԱՏՐԵԱՆՑ  
( Կապիտան Բաբկէն )



## ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԵՐ ԽԱԶԱՏՐԵԱՆՑ

( Կապիտան Բաբկէն )



Բնիկ երևանցի էր Նիկողայոս Տէր Խաչատրեանց, որ ծնւել է 1877 թւին, մտել է երևանի թեմական դպրոցը 1885 ին և աւարտել է 1896-ին առաջադէմ աշակերտներից մէկը: 1898-ին զինւորակոչին զինւոր գնաց և երկու տարւայ ծառայութիւնից յետոյ վերադարձաւ պահեստի սպայի սատիճանով: Զինւորական ծառայութիւնից տուն գալով, մի ժամանակ մտաւ գործելու մի երկաթավաճառի մօտ, բայց հոգեկան բաւականութիւն չգտնելով այդ զբաղմունքի մէջ, այս տարւայ գարնան անսպասելի կերպով նետւեց յեղափոխական ասպարէզ: Նախ զբաղւեց զինւորական մարզանքներով և ապա միացաւ արշաւախմբին և կուի դաշտում ընկաւ հերոսական մահով:

Բնաւորութեամբ պարզ էր և համեստ, աշխատող առանց խօսքի, առանց աղմուկի: Նա իր սառը բնաւորութեամբ նման էր ճափօնացու որպիսի՛ սառնութեամբ նա կուել էր մինչև վերջը, մինչև մահւան բոպէն, միևնույն ժամանակ կառավարելով իրեն հետ կռւողներին:

Այդպիսի կռւողներ մենք քիչ ենք ունենում:



անընդհատ ու լարւած ուշադրութեամբ կռւելուց և թշնամու անդադար գրոհ տալը այդ դիրքի վրայ՝ ստեղծեցին օրհասական դրութիւն մեր մի բռւռն կտրիձների համար։ Բարկէն, Վահան, Համօ և Գարեգին կռւում էին մի անասելի քաջութեամբ, գետին տապալելով արշաւող խուժանի շարքերից շատերը, մինչև որ իրենք ևս իրենց դիրքերում, ծանր կռւի մէջ, ընկան քաջի մահով։ Զորս հերոսների նահատակման տեղում, շատերի ասելով, թշնամին թողեց աւելի քան հարիւր հոգի....


Մի ոչ պակաս յամառ կռիւ տեղի ունէր այդ բոպէին մի այլ դիրքում։ Քրդերի մի բազմութիւն հիւսիսից և զօրքերի մի հարիւրեակ արեւմուտքից մեծ կորուստներով յետ էին մղւում մի դիրքից, որտեղ ամրացած դիմադրում էին հինգ Փէդայիներ Սուրէն, Հաջի, Սիմօն, Պետրոս և Մինաս։ Կռիւը ծանր էր և անհաւասար։ Դիրքի վրայ յարձակում էին գործում մի քանի կողմերից, նոր ու թարմ ուժերով։ Թշնամին թէև կորուստ չատ տւալ այդ տեղ էլ, բայց յարձակումը չէր գաղարեցնում։ Հինգ հոգու խումբը ստիպւած էր դիրքը թողնել։ քաջ Սուրէն, ալեխառն Հաջին, Մարգիսը և կիլիկեցի Սիմօնը առիւծի պէս դուրս թըռան դիրքերից, նետւեցին թշնամու կրակի մէջ, յանդուգն յարձակումով թշնամուց մի քանիսին գլորեցին, բայց իրենք էլ ընկան հերոսի պէս։ Այդ օր թշնամու կորուստը 200kg անց էր։

\* \* \*

Արեւ թեքեւում էր։ Երկու տասնեակներ պահում էին դիրքերը, իսկ միւսները հետզհետէ գրաւում էին բարձր դիրքերը, որտեղից գնդակների տարափի տակ յետ քշեցին թշնամուն։ Եւ հոչակաւոր Զնդլի բարձունքների վրայ շուտով նորից ծածանւեց Դաշնակցութեան յաղթական դրոշը։

Յուլիսեան արեւ իր բոլոր ջերմութեամբ դեռ ևս չարունակում էր այրել Զնդլի անջրդի, լերկ և ժեռուտ բարձունքները։ ամէն բան խաղաղ էր, օդի մէջ նկատելի չէր ոչ մի չարժում։

Ահա այդ բարձունքների մի թեք հարթութեան վրայ էր որ չունչ էր առնում ծծկեր և լացով երեխաներով ծան-



ՀԱՅԻ ՍԱՐԳԻՒ ՊԱԼԵԱՆ

Հայի Սարգիս Պալեան կուհիցի 50 սարեկան,  
Տարիքով յիսունից այս ծերունին իր դէմքի վրայ կուռացր էր մի վկա՞ս, մի սոսկութիւնիցուն, Տիգրութեան և աւազանուն ջուրի տարեցութեան շուրջ պատճեն կուռացր էր կամաց յիսունին, որ ընկաւ ոտառսպանքի կայլուց, հերոսի վայել մահու,



ԿՐԿԿԵՑ, ՄԻՄՈՒ



բարենուած, տուն ու տեղ ձգած Մօսունի և Քօրունի գաղթող ժողովուրդը: Դառը ճակատագրից հալածւած թշւառների այդ տեսարանը յուզիչ էր: Ո՞ւր էին դիմում նրանք. «Քրիստոնեայ» (?) ցարի պաշտպանութեա՞ն ապաւինելու...

Առաւոտ էր արդէն, առաւոտ մեծ օրւայ, մեծ կուի:

Մօսունի փախստական ժողովուրդը առաջ առաջ բարձրանում էր դէպի Զնդլի դիրքերը. մի երկու տասնեակ գնդակների տակ ուղեկցում էին 500ից աւելի կանանց ու երեխաների:

Գիշերային յարձակումները և սոսկալի կոտորածը ոտի էր կանգնեցրել շրջակայ աշիրէթները, ո՛րը ձիով, ո՛րը ոտով, ո՛րը զէնքով և ո՛րը անդէն: Դրոհ էր տալիս թիւրք զօրքը, հետեւակ և հեծեալ հարիւրեակներ կազմած: Նորից տեսնեցին քրդեր և բաշիրօզութները, դաշտի վրայ երկաց երկու թնդանօթ ևս, որոնք որոշ տարածութիւնից առաջ այլես շարժւել չկարողացան. ոմբակոծութիւնն էլ կատարւում էր աննպատակ կերպով: Մօսունի առաջ տարածուող դաշտը ծածկւեց քիւրդ խուժանով:

Շուտով յայտնեցին Փէդայիները: Ամբողջ օրւայ ծանր կուից յետոյ յոգնած ու դադրած զինուորները համախմբը ւում էին խորհրդակցութեան. նրանց հոգուը դաղթական ժողովուրդն էր. տեղակուրկ, բաց երկնքին ապաւինած այդ հալածւած, տանջւած ժողովուրդը: Յոգնածութիւնը, քաղցն ու ծարաւն ուժասպառ էր արել գաղթող բազմութիւնը, իսկ քերծւած՝ արիւնլւայ եղած ոտներով քաշ երկող մանուկների լացն ու կոծը աշխարհ էր բռնում....

Նրանք սահմանի միւս կողմում ունէին հարազատներ, որոնց մօտ կարելի էր պատսպարան գտնել նրանց համար: Ահա այդ ծանր խնդրի լուծմամբ զբաղւած էր Փէդայական խումբը, երբ յանկարծակի տեղացող գնդակներից մի քանի ընկերներ զարկւեցին: «Միթէ՞ թշնամին գաղտագողի պաշարեց և թակարդի մէջ ձգեց արշաւախումբը»: Այս հարցը վայրկենապէս անցաւ բոլորի գլխով և աջ ու ձախ սկսան պայթել հրացանները:

«Տղե՛րք, սահմանից են գալիս գնդակները, համբերեցէ՛ք»: Այս ձայնի վրայ հայեացքները այն կողմը դարձան: Յիրաւի, ոռւսաց սահմանի վրայ կանգնած էր ոռւսահպատակ քիւրդ Համիտ բէդը, իր երկու հարիւրից աւելի հրա-

ցանաւորներով, իսկ նրանից աւելի էլ բարձր դիրքեր բռնած երևում էին երեք հարիւրից աւելի կօղակներ և սահմանապահ զինւորներ։ «Ամէնաբարեպաշտ և քրիստոնեայ» ցարի զինւորներն էին հայերի վրայ կրակ տեղացողները...

Ուուս նենդամիտ կառավարութիւնը նախօրօք յայտնել էր թիւրքերին՝ պատրաստող հայ արշաւանքի մասին։ պատրաստութիւններ տեսնել էին երկու կողմից էլ կրակի մէջ առնելու ֆէդայուն։ Այս ստոր դաւադրութեան մէջ առանձին եռանդ էր ցոյց տւել Սուրբմալուի գաւառապետը, ոռուս ոստիկանի բոլոր լրբութիւնները իր մէջ մարմնացող Յօդուսլաւսկին, և արշաւանքի օրը նա սահմանագլուխ պիտի գնար անձամբ իր գաւը կիատար ածելու, բայց արշաւանքի նախորդ գիշերը յուրիս 11-ին (24) հայ տէորիստի գնդակից ընկաւ թշւառականը իգդիրի չուկայում....

Ճնշւածների համար արիւն թափող ֆէդայու կրծքում կատաղի զայրոյթ առաջացրեց այդ ստոր դաւաճանութիւնը։ Այն տեղ — սահմանի միւս կողմում — քրդի հետ միացած մահմէդական տաճիկն էր հային կոտորում, իսկ հիմի էլ, այս տեղ, նոյն քրդի հետ միացած քրիստոնեայ ոռուսը....

Խուսի «աղատարար» զէնքը պղծւա՛ծ, կեղառութեան էր այլեւս։ Նա քրդի, տաճկի զէնքի անարգութեանը հասած, կրակ էր թափում աղատութեան ձգտող ճնշւած ու «քրիստոնեայ» մի ժողովրդի զաւակների վրայ։

Այն ժամանակ երբ ոռուս կառավարութեան Պօլսի դեսպանը հրապարակաւ միւս գեսապանների հետ ոչ Փօրմների մասին էր խօսում, հէնց նոյն ժամին ոռուս զինւորը, քրդի հետ միացած, կրակ էր տեղում նոյն հալածւած հայի վրայ։

Ո՞վ զաղելի ու լրենի քաղաքական խարէութիւն...

Այդ կրակի տակ էր նաև գաղթող բազմութիւնը, կիների ու երեխանների բանակը, որ վայնասուն էր բարձրացը նում։ Կուելը անմտութիւն էր։ Որոշեց բարձրացնել անձնատուր լինելու միջազգային նշանը։ Իզո՞ւր։ Քրդի հետ միասին, նրա դաշնակից ոռուս զինւորը արհամարհեց սպիտակ դրօշը և շարունակեց կրակ թափել....

— «Տղե՛րք, զատւեցէք գաղթականներից և զէնքներդ ուղղէք միմիայն քրդին, իսկ ոռուսին մի դպէք։ Առայժմ մենք բաւականանանք Եւրոպայի առաջ դնելով նրա նենդաւոր քաղաքականութեան այս ամօթարեր փաստը»։ Այս

խօսքերի հետ խմբապետը առաջ անցաւ ինքը, նորից տեղաց հայդուկի կրակը, երկու կողմից ընկան դիակներ, մինչև մութը կոխեց սար ու ձոր....



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԿԱՐԵԱՆ  
ուսու կօզակներ էին, որոնք կողոպտում էին հայ Փէղա-  
յիների դիակները.... (\*)

Ռուս գինուորին խնայ-  
ւում էր, թէև նա շարու-  
նակում էր Համբագ բէզի  
թիկունքը պահել: Տա-  
ճիկ զօրքերի և զօրանոց-  
ների վրայ կատարեալ  
յաղթութիւն տարած հայ  
քաջերը ուուների կրակի  
տակ կորցրին 17 ընկեր:  
Սրանց մէջ է Ներքին  
Ազուլիսից Յովհաննէս  
Մակարեան, որ աւար-  
տել է Ներսէսեան դպրոցը  
և որ միացաւ արշաւա-  
խմբին բժշկի պաշտօնով:

Լուսինը Զնդիի բար-  
ձունքների և ձորակների  
մէջ երեւան հանեց շարժ-  
ւող ստերներ, — դրանք

(\*) Այդ անսիրտ ու անամօթ գործողութիւնը ղեկավա-  
րում էր Իգդիրի պլաստունների (մագլոց) գնդի մի սպայ  
շտափու—կապետան Գնուտօվ: Սա յունւար 31 (գետր. 13)  
երեկոյեան ժամը 7.ին Իգդիրի փողոցներից մէկում Հ. Յ.  
Դաշնակցութեան վճռով կրեց իր արժանաւոր պատիժը,  
տէորի ենթարկելով, ինչպէս նոյն վիճակին էր երթարկել  
մի քանի ամիս առաջ, «Որսկան» խմբի վրայ յարձակման  
գործի մէջ ամբաստանւած գնդապետ Բըկօվ, Օլթիում:





## ՄԻՆԱՍ ՏՈԼՊԱՇԵԱՆ

( Գայլ—Վահան )



1842-ին ծնած է Մինասը, Բալուի Հաւառ գիւղը. համեստ ընտանիքի մը զաւակն էր ան, Տօլպաշեան բազմանդամ գերդաստանէն :

Մինասին դպրոցական կեանքը եղած է պարզուկ նա. խակրթարանի մը ընթացքը — իր գիւղին մէջ պարզ կար. դաշտել մը հազիւ միջոց ունեցաւ սորվելու :

Հայուն, մասնաւորապէս իր գիւղին վաղեմի սովորու. թեան համեմատ, երբ 15—16 տարեկան եղաւ, պանդխոտի ցուպը ձեռք առաւ՝ իր սիրելիներուն ու հայրենի օճախին մնաք բարով ըստա՝ իրեն տարեկից ընկերներու հետ, և ինք- զինքը Պոլսի ափերը նետեց :

1889 թւականին արդէն Պոլիս էր պատանի Մինասը. հոն հետեւցաւ պապենական արհեստին, և եղօրը՝ «ուս- տա» Գասպարի ձեռքին ու խնամքին տակ հիւնութեան հետեւցաւ :

Տօլպաշեան իբր ընդունակ պատանի իր արհեստին մէջ լաւագոյն վարպետներէն եղաւ, ու մինչդեռ մէկ կողմէն կը ջանար լաւ «տիւլկէր» մը ըլլալու, մրցելով իր հասակակից ընկերներուն հետ, միւս կողմէն սկսաւ ծանօթանալ օրւան հայ կեանքին կենսական պահանջներուն :

Ընթերցանութեան սիրահար մըն էր ան, և ատոր կը պարտի իր զարգացումը . պօլսական թերթերէն զատ, ան կը կարդար արտասահմանեան հայ թերթերը . «Արմէնիա»ն, «Հնչակ»ը, «Դրօշակ»ը նոր-մարդ շինած էին Մինասը . ան հոն տեսած ու սիրած էր ցեղին տառապանքը ու խոյանքը : Իր զգացումները յաղթահարած էին փտած գաղափարները հին վարպետներուն, որոնք հարիւրներով տարագրւած, անգիտակից իրենց «Հալին» ու վիճակին, դարաւոր կեանք մը մաշեցուցած էին Չուքուր Զէմէի «Թաշխան»ը : Միշտ միամիտ հաւտացողները «Ճակատագրին», որով սերունդներ ապրած էին և հազիւ բախտը վայելած էին «Ճերութեան օրեր հայրենի գերեզմանոցին մէջ վերջին հանգիտաը առնելու» : Քանի՛ քանի «Փալակ վուրդունի»ներ ա՛խն ու հառաջանքը կրծքերնուն մէջ ծովացած, հալած՝ մաշած են Թաշխանի քարայրին մէջ, և Պալըգլըի գերեզմանոցը այդ հառաջալից կուրծքերը՝ իր սև հողերուն տակ առած, անտէր, անյիշտատակ ժամանակի մոռացութեան մէջ անէցուցած է, թոյլ չտալով անոնց որ թրքական անարդ ուժիմը ըմբռնէին, հայ մարդուն թշւառութեան իրական պատճառները հասկնային . . . .

Մուսաթիւրք պատերազմէն ասդին, երբ հայ գիւղացին վերածնութեան նոր թւական մը մտաւ, նոր սերունդը փոխեց իր մտածողութեան եղանակը . ան այլևս լոկ ընտանեկան, նեղ, սահմանափակ վիճակին մէջ չապրելով, ցեղին վըրայ խորհեցաւ, անոր տառապանքին պատճառները սերտեց : Այդ հոսանքին հետ քալեց Մինասն ալ . անկեղծ հաւտացող մը եղաւ հայ Յեղափոխութեան ու միշտ անձնւէր սիրտ մը պահեց իր կուրծքին տակ, պատրաստ զոհւելու հայրենիքի փրկութեան սեղանին վըրայ :

Երբ Պօլիս էր զինւորագրեցաւ «Հնչակեան» դրօշին և իրրե տէ ո օ ր ի ս տ իրեն յանձնւած գործերը մեծ յօժարութեամբ կատարեց, «մատնիչները խեղղամահ ըրաւ» և առանց վրդովելու անոնց հետքերը կորսնցուց : Եւ մինչ ինքը ազատ համարձակ իրեն յանձնւած ամէն գործ կամաւոր յանձնառութիւնով մը կրօցածին չափ կատարեց, միւս կողմէն իրրե վարպետ, գործէն ալ ետ չմնաց, ուրկէ բարի քրիստոնէի մը պէս իր հալալ վաստակէն առատ բաժին մը կը հանէր ազգին փրկութեան գործին :

1892-ին Մինասը պանդխտութեան երկրորդ շրջանը ը-  
րաւ, ուր մնաց մինչև 1895—'96 արիւնի թւականը :

Ընդհանուր ջարդերուն ժամանակ ան ալ միւսնե-  
րուն պէս ինկաւ Սև ծովի ափերը . Ռումանիոյ քաղաքնե-  
րէն մէկուն մէջ շարունակեց իր արհեստը, ուրկէ հազիւ  
կրնար իր և հայրենիքի մէջ ողջ մնացող մօրը օրապահիկը  
ճարել :

Գործերը գէշ էին և անոր հետ հնչակեան առաջին պա-  
ռակտումն ալ եկաւ անոր զգայնոտ սիրտը տակն ու վրայ  
ընելու :

Մինաս Ռումանիայէն անցաւ Պուլկարիա . մօտաւորա-  
պէս երկու տարի Ռուսութուք մնաց, սակայն հոն ալ իր պա-  
հանջներուն բաւարարութիւն չդառաւ . հեռաւոր Ամերիկայի  
լուրերը տարօրինակ չափազանցութիւնով ամէն մարդ իրեն  
կը քաշէր . օրին մէկը ան ալ ինքզինքը Ամերիկայի մէջ գը-  
տաւ : Այդ ժամանակ արդէն կորսնցուցած էր իր կինն ու  
մայրը :

Մինաս, որ ստեղծւած էր գործի մարդ ըլլալու, այժմ  
աւելի աղատ կ'զգար ինքզինքը . չէր կրնար անտարբերու-  
թեան, մոռացութեան հեռու ճամբաները քալել, ուր նոր  
աշխարհի մէջ «չէղոք»ներու լեզւանի լէգէօն մը վայրապար  
իր կեանքը աննպատակ կը քաշքչ «կեանքից պէզար»  
խորհրդաւոր կամէութիւնով մը, աղատագրումի գործէն  
միշտ հեռու փախչելով :

Տօլպաշեան ժամանակաւոր սպասումէ մը ետքը — երբ  
տեղական մարդիկն ու պալմանները ճանչցաւ — օր մը որոշ  
կերպով գաշնակցական ըլլալու ծրագրով մօտեցաւ Փրօվի-  
տէնսի կօմիտէին և խօսքի ընթացքին մէջ անվերապահօրէն  
յայտարարեց .

— « Հնչակեան դրօշակը իր սրբութեան բարձունքէն  
« վար ինկած է . անկեղծները տեսակ մը դասալքութեան  
« մատնւած են . ասպարէզը թողւած է խորթ եկուորներուն  
« ու հին ճիզւիթներուն, որոնք դրօշակը երկուքի պատ-  
« ռած կը շահագործեն . չեմ կրնար մնալ դրօշակի մը տակ,  
« որ միայն շահագործումի առարկայ դարձած է : »

Դաշնակցական ըլլալէ ետք՝ ձեռնարկեց իր փայփայած  
ծրագրին — երկիր մտնելու գործին — ետեէ ըլլալ . կարձ  
ժամանակ մը միայն միացաւ «Արշակունեաց Զինավարժա-

կան լուրմբին» . «փրէզէնթ՝ արմսը», «ռայթ շօլտըր՝ արմսը» գործնական յեղափոխութեան համար լոկ ժամավաճառում է . Ամերիկայի ցուցամոլ կեանքին հաճոյալից ժամանցներուն միայն կը յարմարի ան , ուստի զարմանալի չէ որ շուտով հրաժարեցաւ անկէ :

Երկու խօսք Մինասին ամբողջ էութիւնը իր մէջ կը պարունակեն .

« Անսխալ զարնողը թող գայ ,  
Նամուս ունեցողը թող գայ . . . .

Անսխալ զարնող մըն էր Մինասը :

Նամուսը , օ՛հ , իր հոգեկան աշխարհի ամբողջ խռովքն էր ատ . չէր կրնար տանիլ այդ գարաւոր անարգանքը , որ օրը օրին հայ նամուսին վրայ գործ կը դրւէր . վազեց միացաւ անոնց՝ որոնք հայ յեղի պատւի փրկագործումին համար զինւորագրւած էին :

Ցոնաբարումը , թալանը , սպանութիւնները , որ սովորական դարձած էին 1894 էն ասդին , իր հայրենիքի ցաւերով գալարող Մինասը ծայրայեղ ջղուա շինած էին , տեսակ մը գառագդւած վագր . ու երբ իր փայփայած իտէալին մօտեցաւ , և կրցաւ զօր-զար երկիր մտնելու որոշումը կորցել , ետևն անդամ չնայեցաւ , չլսեց իր շուրջին վայնասունները , և 1902 նոյեմբերին ճամբայ ելաւ . իր ընկերոջ Գաբօին հետ . . . .

Ժամանակ մը սահմանագլխին մօտերը իբրև հիւսն . . . . «կոթեր շինելու գործով պարապեցաւ» . խաղաղ գործը չսիրեց , ու յետոյ փոխադրութեան գործը իրեն յանձնեցաւ :

Մինաս հիմա մասամբ իր նպատակին հասած էր , վրէժի գործիքը իր ձեռքին մէջն էր շարունակ . շատ գոհ էր . իր նամակները , որ իր հոգին կ'արտայայտէին՝ խանդ ու հաւատք կը ներշնչէին զինք ճանչցող ընկերներուն :

Միակ ցաւը որ ունէր՝ Գաբօէն զատւիլն էր . իր մէկ նամակին մէջ կը գրէր .

— « Գաբօն խրկւեցաւ ուրիշ տեղ , ուրիշ գործի համար . « սրտանց կը ցաւիմ անկէ բաժնւելուս . բայց հոս միսիթարա . « կան կէտն ան է որ ամէնքս ալ ընկեր եղբայրներ ենք , « միացած մէկ գաղափարի շուրջը . ո՛չ Գաբօն իս կորսնցը . « նելով պիտի տխրի , ո՛չ ալ ես անկէ բաժնւելով . ընկեր-

« Ները ամէնքն ալ իրարու վրայ հոգի կուտան , երանի՛ թէ  
« այս լաւ հոգին Ամերիկա ալ ընդհանրանայ : »

Մօտաւորապէս երկու տարի մնաց Մինաս բուն յեղա-  
փոխական գործին մէջ , որուն մանրամասնութիւնները կա-  
րելի չէ այսօր հրապարակել , առանց գործ ու մարդիկ վը-  
տանգելու : Ուստի հոս կը շատանանք նոյն շրջանի կեդր .  
Կօմիտէի գրած նամակէն քաղւածք մը ընել , որ Մինասի  
գործնէութիւնը կը բնորոշէ .

« . . . Մեր շրջանի գործն է ապրանք փոխադրել Թրքա-  
« Հայաստան . մօտ օրերս Վահանը պատրաստւում է նորից  
« անպատճառ կատարելու ԶՈՐՈՈՐԴԻ ԵՐԹԸ՝ մի գժւարին ,  
« բայց անհրաժեշտ գործ , որը յաջողութեամբ իկատար է  
« ածում նա , մանաւանդ այժմ , որ լեռները սկսել են ձիւ-  
« նել և ցրտել . . .

« 18 սեպտ , 1903

ՄՐԳԱՍՏԱՆԻ Կ . ԿՕՄԻՏէ »

Եւ արդարեւ կարձ ժամանակի մէջ այդ շրջանի փոխա-  
դրութեան գործը , Մինասի չնորհիւ , առաջ գնաց մեծ յա-  
ջողութեամբ . իրեւ խմբապետ , Մինասը չորս խմբերու  
առաջնորդեց գէպի Ա . . . առաջին անդամ 8 հոգով , երկ-  
րորդ անդամ 25 հոգով , երրորդ անդամ 27 հոգով և չոր-  
րորդ անդամ նորէն 27 հոգով : Բայց այդ գործերը այլևս  
չկրցան գոհացում տալ Մինասին . և Մօսուն Զօսի արշա-  
ւանքի տաեն , ինքն ալ իր թեկնածութիւնը առաջարկեց :  
Արշաւանքի պատրաստութեան գործին ծանրութիւնը մեծ  
մասով անոր ուսերուն վրայ ինկաւ , և Մինաս կատարեց այդ  
ամէնը մեծ հմտութեամբ ու ճարպիկութեամբ :

\* \* \*

Անոր հերոսական մահը մասնաւորապէս սգացին անոր  
ապրած շրջանի գիւղացիք , որոնց համակրանքը և սէրը շա-  
հած էր Մինաս իր մաքուր վարքուբարքով , բարեհամբոյր  
բնաւորութեամբ և Գործին վրայ տածած անձնւիրութեամբ :

Նամակէ մը հետևեալ հատւածը կը քաղենք հոս , որ  
իր հերոսական մահէն Զ—Յ շաբաթ ետք մեր ձեռքը հասաւ  
իր լուսանկարին հետ .

— « Հազիւ գուրգուրանքի ակնարկ մը քաջին կենդա-  
« նագրին վրայ , որ իր պարզուկ ձեւին մէջ հիացմունք ու  
« պատկառանք է համակ , ահա՛ վրայ հասաւ Մօսունի զօ-

« բանոցը քարու քանդ ընողին խիզախումներն ու հերոսական մահ:

« Վահանի ծանօթներն ու ընկերները անհունապէս վըշ-  
« տացան. ան վրէժի նոր օղակ մըն ալ աւելցուց բոլոր  
« անոր ծանօթ հայերու սրտին մէջ, սկսւած գործը աւելի  
« թափով առաջ տանելու . . . . »

Յարգա՞նք քեզի, անուշիկ Մինաս, որ կուի դաշտին վը-  
րայ ծաղիկ կեանքդ զոհ բերիր, պաշտած հայրենիքիդ ա-  
զատութեան սիրուն համար: Դուն ինկա՛ր, լիովին կատա-  
րեցիր բաժինդ. այսօր, մեր արցունքի օրերուն մէջ, չենք  
մոռնար յիշատակիդ, իսկ վաղը, երբ հայրենիքի ազատու-  
թեան արշալցուը ծագի քու և արի ընկերներուդ թա-  
փած մաքուր արիւնին գնովը, այն ժամանակ ապրող սե-  
րունդը ազգովին պիտի գայ բոլոր նահատակներուդ ցան  
ու ցրիւ ինկած ոսկորներուն առջև պաշտամունքի Մեծ Տօ-  
նը կատարելու . . . .

Հանգի՞ստ ձեզի, մաքառումի ճամբուն վրայ ինկող տն-  
մահ հայ հոգիներ. ողջ մնացող ձեր եղբայրներուն ալ  
ներշնչեցէք զոհաբերութիւն՝ դէպի արիւնու դաշտեր, ուր  
նկան Մեծ Սերոբները, Հրայրները և դուք . . . .

Յարգա՞նք. ձեր անմոռաց յիշատակին:

ՎԵՏԱՀԱՐ





## ❀ՄԱՅԱՑԱԿԸ❀


Ահա անւանական ցուցակը Բագրեանդի կուին մէջ ին կածներուն, տասնեակներու կարգով դասաւորւած : (?) Հարցական նշան դրւած է անոնց առջև, որոնց մահը ստուգ-ւած չէ դեռ :

«ԱՐՏԱՒՐՁԴԻ» ԽՈՒՄԲ

- |     |         |      |                                 |
|-----|---------|------|---------------------------------|
| Ա . | Տասնեակ | 1 .  | Յովհաննէս Մակարեան, բժիշկ       |
|     |         | 2 .  | Պետրոս Պետրոսեան (?)            |
|     |         | 3 .  | Արտուշ Տէր Մատթէոսեան           |
|     |         | 4 .  | Կարապետ Քեալեան                 |
|     |         | 5 .  | Յակոբ Միհիթարեան                |
|     |         | 6 .  | Գարեգին Յարութիւնեան, գանձակեցի |
|     |         | 7 .  | Մկրտիչ Բեռնակիր (Հնկարւած) (?)  |
| Բ . | »       | 8 .  | Համազասպ Նազարեան, կարնեցի      |
|     |         | 9 .  | Յարութիւն Վիրաբեան              |
|     |         | 10 . | Մկրտիչ Գրիգորեան                |
|     |         | 11 . | Ղազար Քամալեան                  |
|     |         | 12 . | Մուրագ Այզազեան (Հնկարւած)      |

- գ. .      »    13. Գրիգոր Կարապետեան  
14. Միքայէլ Պօղոսեան  
15. Պետրոս Մուրատեան  
16. Մինաս Տօլպաշեան — Վահան, Խմբապետ  
17. Նիկողայոս Տէր Խաչատրեանց — օգնական Խմբապետ
- « ՄԱՍԻՄ » ԽՈՒՄԲ
- Ա. .      »    18. Սուրէն Մինասեան, Կիլիկեցի  
19. Հաջի Սարգիս Պալեան  
20. Գրիգոր Տէրտէրեան  
21. Գարեգին Լուսաբարեան  
22. Մատթէոս Սարգսեան  
23. Խաչատրւը Տուզեան  
գ. .      »    24. Մկրտիչ Սաֆարեան (?)  
25. Երւանդ Բանդալեան  
26. Հայկ Աւատեան  
դ. .      »    27. Խաչատրւը Յովակիմեան  
28. Արամ Սարգսեան  
Ե. .      »    29. Պետրոս Բաբայեան  
30. Աստուր Վաղկեան  
31. Գէորգ Աբբահամեան (?)  
32. Սիմէօն Կիլիկեցի, օգնական Խմբապետ





## ՍԱՍՈՒՆԻ ՀԱՄԱՐ ԵՒ ՍԱՍՈՒՆ ՇՈՒՐՋԸ



( Ժամանակադրական ծանկ մը կոխւներու )

Հայ ազատագրութեան ճիզերու տարեգրքին ամէնէն փառաւոր, ամէնէն միմիթարական և ամէնէն յուսատու է-ջերէն մէկը պիտի մնայ 1904 տարին : Դաւիթ բէկի օրերէն ասդին՝ 1722 էն իվեր, հայ երկիրը չէր տեսած հայ ուղմական կորովի այնպիսի անօրինակ փթթում մը, որուն հանդիսավայրը եղաւ Օսմ. Հայաստանի արևելեան մասը, ամբողջ Ռուսական Հայաստանը և Ատրպատականը, մասով մը : Իսկ ազգային գիտակցութեան զարթնումին և մանաւանդ ժողովրդային համերաշխ գործակցութեան տեսակէտէն՝ հայ պատմութեան ոչ մէկ շրջանը կրնայ հաւսարիլ 1904-ին, եթէ մինչեւ իսկ երթանք հասնինք Երդ դարու կրօնական ազգային ծանօթ շարժումին, որ իր պատմական համբաւը աւելի եղիչէի նկարագրական ոճին կը պարտի, քան պատմական հարազատ իրողութիւններու :

Եւ արդարե 1904-ին է որ Յեղափոխական Շարժումը համատարած կը գրնէ բովանդակ արևելեան Հայաստանը, այնպիսի խիտ ճիւղաւորումներով, այնպիսի բուռն ուժով, որ կարելի չէր և ոչ ոք կրցաւ նախատեսել տակաւին տարի մը առաջ :

Մեր նորագոյն պատմութեան մէջ անդուգական այդ վայրկեանը ունի, ինչպէս ամէն երկոյթ, իր պատճառները — և ատոնք երկուք են — առ աջ ի ն՝ Սասունը բնաջինջ ընելու սուլթանական ծրագիրը, երկրորդ՝ Ռուսիոյ մէջ հայ եկեղեցական կալւածներու յափշտակումը ուսւ կառավարութեան կողմէ, որ կուգար վերջին տարակոյսները փառատելու՝ ցարերու հետապնդած հայ աջ ի ն ջ ք աղաքանութեան մասին :

Այդ երկու ազգային վտանգներու դիտակցութիւնն էր, որ ցարին և սուլթանին հպատակ հայերը բերաւ միացուց ուազմական այն բուռն և անմոռանալի ճիգերուն մէջ, որոնք տեղի ունեցան 1904 ին, Մայր Մասիսի երկու երեսներուն վրայ :

Հոս զանց կ'ընենք մէնք առաջ բերել բուն Սասունի կոփեներուն ժամանակագրութիւնը, որ առանձին պրօշերի մը նիւթ պիտի ըլլայ, և կ'ուղենք յիշտակել միայն այն կոփեները, որոնք Մօսուն-Զօռի արշաւանքէն առաջ կամ ետք տեղի ունեցան, Սասունի գործին համընթաց : Որովհետեւ կոփեները ոչ միայն կանգ չառին Սասունի սեմին վրայ, ոչ միայն Մուշէն մինչև Վան շարունակեցան հրոսակային բնդ հարումներու կուռ շարք մը, այլ տեղի ունեցան կարգ մը ուրիշ փառաւոր կոփեներ, — որոնց ամէնէն յաջողն է Մօսուն-Զօռի արշաւանքը, — սահմանւած կամ օգնութեան երթալու Սասունին կամ հեռացնելու թիւրքերուն ուշը Տարօնէն այլուր :

Եւ արդարեւ առաջին անգամ ըլլալով մեր յեղափոխական պատմութեան մէջ հնարաւոր կը դառնար, կ'իրագործւէր հ ա մը ն թ ա ց դործնէութիւն մը Մայր Հայրենիքի տարբեր կէտերուն վրայ, առաջին անգամն ըլլալով՝ հեռաւոր վայրերէ՝ տարբեր սահմաններէ՝ այդպիսի կորովի և համակարգ ջանքեր կը կատարւէին վտանգի մէջ գտնուող հայ բնակչութեան մը օգնութեան փութալու :

\* \* \*

Դէպքերը ինքնին այնքան պերճախօս են, որ մենք պիտի շատանանք միայն թւելով ատոնք :

- 1903 մայիս 25. — «Մրրիկ» հեծելախումբ, խմբապետ Թող-  
գոմ, 22 հոգի: Ապահով հասան Սասուն:
- » սեպտեմբեր 30. — «Կայծակ» հեծելախումբ, խմբապետ  
Խան: 53 հոգի: Ընդհարում Բասենի մէջ:
- 1904 մայիս 29. — Թոփսմախի և Երկաթի միացեալ խմբերը:  
35 հոգի: Ընդհարում Արձէշի մօտ:
- » յունիս 20. — «Դժոխվաք» հեծելախումբ, խմբապետ  
Վաղարշակ: 30 հոգի: Ընդհարում Զիվինի մօտ:
- » յունիս 26. — Դումանի խումբ: Հեծելախումբ 18  
հոգի: Պարսկաթիւրք սահմանադլիսի մօտ:
- » յուլիս 14. — «Որսկան» հետեակ խումբ: Խմբապետ  
Թորգոմ: 61 հոգի: Ընդհարում Զարդանիսի մօտ:
- » յուլիս 25. — «Արտաւազդ», խմբապետ Գայլ Վահան:  
35 հոգի և 8 բեռնակիր զինւոր: Արշաւանք Մօսունի  
վրայ:
- » յուլիս 25. — «Մասիս» խումբ, խմբապետ Մ., 50 հոգի  
և 10 բեռնակիր զինւոր: Արշաւանք Զօռի վրայ:
- Մեր այս թւումին մէջ յիշատակւած «Մրրիկ», «Կայծակ»  
և «Շանթ» խումբերը, թէև 1903-ին անցան սահմանը, սա-  
կայն ջարդի վտանգի տակ գտնւող Սասունին օդնութեան  
համեմու սահմանւած ըլլալնուն, 1904 ի խումբերուն հետ  
ամբողջութիւն մը կը կազմեն Սասունի համար կատարւած  
յեղափոխական ճիգերուն մէջ:
- Յեղափոխական կռւող և արշաւառ այս խումբերէն դատ,  
1904-ի մէջ ունեցանք կռւի հանդպած բուն զինակիր երկու  
խումբ ևս:
1904. մայիս 3. — Զողիկի խումբը: 6 հոգի: Ընդհարում  
Լիմ գիւղի մօտ:
- » հոկտ. 29. — Փոխիկի խմբապետութեամբ, 15 հոգինոց  
հեծելախումբ: Ընդհարում պարսկաթիւրք սահմանի  
մօտ:

Յեղափոխական գործնէութիւնը որքան ալ գաղտնի ըլլայ, նորէն կարելի է անոր մասին մերձաւոր գաղափար մը կազմել, ուսումնասիրելով այն դէպքերը, որոնք ԱնկուՄՍ.ՓԵԼԻՈՐէն և ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆՈՐԷն երևան կուգան, եթէ իրապէս այդպիսի շարժում մը գոյ է ժողովրդի մը առօրեայ կեանքին մէջ :

Ընդհարումներու հետեւանքով երևան եկած այս բոլոր խումբերը կը ներկայացնեն 481 ֆէտայի, որոնց 133-ը հեծեալ : Եթէ նկատի առնենք այդ ամէնուն գէնքերը, ուաղմամթերքը, գործիքները, հագուստը և վերջապէս ձիերը — այդ ամէնը պատկառելի ուժ մը կը ներկայացնէ ինքնին :

Եթէ աւելցւի ասոնց վրայ երկրի մէջ կռւող խումբերն ու անոնց հրացաններն ալ, որոնցմէ Բաղէշի կուսակալին հաշւով 1500 միայն Սասունի մէջ գտնւած են, և «Հայրենիք»ի ոռուսաթիւրք սահմանագլխի թղթակցին ըսելով՝ 400 Տարօնի դաշտին մէջ ձեռք անցւած են ( մաւզէր, պէրտան և շէշխանէ ) — այն ատեն կրնանք, ճշմարտութեան քիչ մը գէթ մօտիկ հասկցողութիւն մը ունենալ Սասունի համար կատարւած մեծ ձիգերու մասին :


Փութանք ըսել թէ այդ խումբերը իրենց ընդհարումներու մէջ կորուստ տւած են մօտ 200 հոգի, իսկ թշնամիէն ինկած է չափաւոր հաշւով մօտ 700 հոգի — մասնաւորապէս Բասէնի, Զիվինի և Մօսուն-Զօռի կոիւներու ատեն :

Հակառակ 1904-ի բոլոր անյաջողութիւններուն, յուսահատութեան շնչտ մը անդամ չարտարերւեցաւ յեղափոխական շարքերուն մէջ : Կուսորւած կամ անյաջողութեան մատնւած խումբի մը լուրն հասնելու հետեւեալ օրը՝ նորը պատրաստ էր արդէն : Կուտղի պակասութիւն չկար . Եթէ զէնք ու ուաղմամթերք ճարւէր անընդհատ, կարելի էր դիւրաւ նորանոր հարիւրեակներ կազմել օգնութեան փութացող : Երկու նկատումներ միայն հարկադրեցին յեղափոխական կազմակերպութիւնը դադրեցնելու խումբերու առաջումը, Մօսունի արշաւանքէն ետք ( յուլիս, 1904 ) :

Առաջին՝ Սասունի դիմադրութիւնը վերջացած էր, և նոր խմբեր կայան չպիտի կրնային ունենալ, եթէ մինչև իսկ հասնէին Մշու դաշտը :

Երկրորդ՝ ռուսները ծայրայեղ աստիճան խստութիւններ սկսան գործադրել սահմանագլխին վրայ, որոնք յանդեցան «Արսկան» խումբի ծանր կորուստներուն, Օլթիի մօտ, յուլիս 14, և Մօսուն Զօռի արշաւանքէն վերադարձող խմբերուն տւած զոհերուն՝ յուլիս 25-ին։

Այս բոլոր ճիգերուն վրայ արագ ակնարկ մը նետելէ ետք, պարկելու մարդ մը չի կրնար մերժել որ մարդկօրէն հնարաւոր եղածը փորձւեցաւ Սասունին օգնելու, և այդ գործը ամբողջովին ինկաւ Դաշնակցութեան ուսերուն վը-րայ, որ յաջողեցաւ Մէկ տարւան մէջ այնքան ռազմական ուժ առաջ բերել ու կազմակերպել, որուն կէսին կէսը կա-րող չեղան ներկայացնել իրմէն առաջ գոյութիւն ունեցող հայ յեղափոխական մարմինները, իրենց գոյութեան ԱՄ-ԲՈՂՋ ՏԵԽՈՂՈՒԹԵԱՆ ՄԻԶՈՑԻՆ։





Պարզ քարտէղ մը գրւած է հանդիպակաց էջին վրայ, ընթերցողին գաղափար մը տալու համար արշաւանքի նը-պատակ ընտրւած վայրի մասին:

Մօսուն-Զօսի անմիջական շուրջը գտնեած գլխաւոր հայ գիւղերու բնակչութեան թիւը և պահականոցներու զինուրական ուժը հետեւեալն էր 1904 յուլիսի սկիզբը.

Դումը լուրսուջաղ — 40 տուն հայ բնակիչ, 25 զինւոր

իւչքիլիսէ — 30 տուն հայ բնակիչ, 50 զինուոր

Ղարաբաղար - 15 տուն հայ բնակիչ, 10 զինւոր

Զուջան -- 40 տուն հայ բնակիչ

$$U_{WJL^0} = 5 \text{ , , , , }$$


*Young - 100* , , , , ,

Фонты — 30 „ „ „ „ 10 *qññlñpr* & 20

$$U_{P\delta m\phi} = 100 \quad , \quad , \quad , \quad 40 \quad ,$$

Զօռ (տաճկ.) — 40 դինոր, սլահակ















19294

2013

